

U 521

the highest 65

891.542 5

U - 39

30 MAY 2011

1-97

~~678~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀԱՏՈՒՄԻ ՔԱՐՏՈՆ

891.542-9
U-39

№ 3.

Ս Է Յ Ր Ի

ԵՍ ԻՇԽԱՆ ԵՄ

Մանկական փողբիլիկի արարածով



Ք Ի Յ Լ Ի Ս

Էլեկտրագ. Օր. Ե. Աղանեսի, Պոլիգ. 7

1913

1913-1914

ԵՍ ԻՇԽԱՆ ԵՍ

Մանկական վոդուիլ մէկ արարածով

ԴՈՐԺՈՂ ԱՆՁԵՐ

Տ. Աննա Արսինեան

Արամ (գիմնագիտ) 12 »

Արաքս 10 »

Մանուշ 7 »

Աշխէն 17 »

Խորէն (գիմնագիտ) 12 »

Մի պատու

Այգեպան

Մի կին երեխա-

յով

Նրա երեխաները

Աղախին

Արամի ընկերը

Գանգատաւորներ

Բեմը ներկայացնում է սենեակ, դիմացը և աջ կողմը
մի-մի դուռ. ձախ կողմը պատուհաններ: Ցերեկ է: Հա-
սարակ կահկարասիք:

ՏԵՍԱՐԱՆ I.

ՄԱՆՈՒՇ (մտնում է տիկնիկ եւ մի արկղիկ
ձեռքին: Սեղանի մօտ նստելով). Տիկնիկիս հա-
մար նոր վերարկու եմ կարել... (Տիկնիկին թե-
ւերից թռնած վեր ըստ ծրագնելով) Քեզ համար
նոր վերարկու եմ կարել... կը հագնեմ... (Տիկ-
նիկը դնելով սեղանի վրա եւ ըացելով արկղիկը)

Հագցնեմ՝ տեսնեմ կը սազի՝ (անում է արկղից շորը, մի ձեռքով քարձր քոնած նայում է)։ Ի՞նչ գեղեցիկ է։ (Վերցնելով տիկնիկին եւ հագցնելով) Արի, Մեղուշ, արի, սիրելիս, արի հագցնեմ. տես դուքսը ինչ լաւ արեւ է, հագցնեմ, գնանք զբօսնելու։ (Չայն լսելով՝ դառնում է դէպի աջ դուռը) Արամը չըլինի... (Սեղանի վրա քայլեցնում է տիկնիկին) Ի՞նչ լաւ սազում է. (տիկնիկին սեղմելով կրծքին) Մեղուշ ջան, հոգիս, ես քեզ շատ եմ սիրում, շատ... (դնում է ծընկանը եւ խաղացնում)։ Ես քեզ համար երգ կասեմ (երգում է)։

Միշտ ծիծաղում ես.

Իսկի չես լալիս,

Իսկի չես խօսում.

Միքիչ էլ խօսիր,

Թէ չէ իմացիր,

էլ քեզ չեմ սիրի:

Ձէ, չէ, մի տխրի,

եւ հանաք արի,

եւ քեզ կը սիրեմ,

Քեզ շատ կը սիրեմ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն II

ՄԱՆՈՒՇ. եւ ԱՐԱՄ

(Երգելու միջոցին աջ դռնից ներս է մտնում Արամը՝ գլխարկը գազաթին ծուռ գցած եւ արագ-արագ դէս ու դէն է ընկնում. Մանուշը լռում եւ դադարում է խաղալուց)։

ԱՐԱՄ (ներս մտնելուց իսկոյն). Ի՞նչ ես մենակ նստել էստեղ... Հայրիկը տանը չէ:

ՄԱՆՈՒՇ. Ձէ. չը գիտե՞ս որ ծառայութեան մէջ է:

ԱՐԱՄ. Մայրիկն ուր է:

ՄԱՆՈՒՇ. Դուքս գնաց, ինձ համար շորացու պիտի առնի. շուտով կը գայ... (վախճանալով նայում է Արամի ետեւից, երբ նա դէս ու դէն է ընկնում)։

ԱՐԱՄ. (նկատելով ու քարկացած). Ի՞նչ ես էտպէս նայում:

ՄԱՆՈՒՇ. Ի՞նչ ես սենեակը տակն ու վրա անում:

ԱՐԱՄ. Շատ մի խօսիր... Ես իմ թուրս եմ փնտռում, կուրի պէտք է գնամ...

ՄԱՆՈՒՇ. Միշտ կուր, կուր...

ԱՐԱՄ. Ձէ մի քեզ պէս նստեմ տիկնիկ խաղցնեմ:

ՄԱՆՈՒՇ. Իմ տիկնիկս քեզանից խելօք է:

ԱՐԱՄ. Քո տիկնիկը յիմար է... իսկ ես իշխան եմ:

ՄԱՆՈՒՇ (անհամարձակ). Դու ես յիմար:

ԱՐԱՄ (ուղառնալից զալով առջը). Ի՞նչ... Ի՞նչ ասացիր... յիմար... Ինչպէս ես համարձակուում ինձ յիմար ասել...

ՄԱՆՈՒՇ (վախճանալով եւ երկու ձեռքով ետ պահելով տիկնիկը). Բա ինչո՞ւ ես դու իմ տիկնիկին յիմար ասում:

ԱՐԱՄ. Քո տիկնիկը յիմար է, ոչինչ չար-

ժէ... Մի օր կը կոտորեմք քո տիկնիկը...
ՄԱՆՈՒՇ (ըստկացած). Որովհետեւ դու վայրենի ես...

ԱՐԱՄ (յանկարծ խելելով տիկնիկը նրա ձեռքից). Առ քեզ վայրենի:

ՄԱՆՈՒՇ (վեր թռչելով եւ ճշալով). Տո՛ւր... անպիտան... Մայրիկին կասեմ...

ԱՐԱՄ (վազելով եւ ծիծաղելով). Կասեմ վայրենի:

ՄԱՆՈՒՇ (վազելով նրա ետեւից եւ լացի ձայնով). Տո՛ւր, ասում եմ քեզ... տո՛ւր...

ԱՐԱՄ (արագ հանելով տիկնիկից վերարկուն եւ զցելով մի կողմ). Առ հա:

ՄԱՆՈՒՇ (վազում է մօտ, վերցնում, տեսնում է՝ վերարկուն է, աւելի ըստկացած նորից վազում է Արամի ետեւից). Վայրենի անպիտան, տո՛ւր տիկնիկս...

ԱՐԱՄ (շուտ-շուտ հանելով եւ դէս ու դէն զցելով տիկնիկի զգեստները)—Առ, առ...

ՄԱՆՈՒՇ (միշտ վազելով նրա ետեւից). Տո՛ւր, տո՛ւր տիկնիկս... Կասեմ մայրիկին... Վայրենի...

ԱՐԱՄ (զգում է սեղանի վրա տիկնիկի մի թելը). Առ քեզ վայրենի:

ՄԱՆՈՒՇ (կանգնում, սկսում է ըստ ձայնով լաց լինել):

ԱՐԱՄ (կանգնում է նրա դիմաց եւ ծիծաղելով մէկ-մէկ սրկում է տիկնիկի միւս թելը, ոտները, գլուխը եւ դէս ու դէն նետում). Էս մէկ

վայրենի, էս երկու վայրենի, էս երեք վայրենի, էս չորս վայրենի, (նետելով ընկնող երեսին) էս էլ հինգ վայրենի...

ՏԵՍԱՐԱՆ III.

ՆՐԱՆԸ ԵՒ ԱՐԱՐՍ

ԱՐԱՔՍ (ներս վազելով աջ դռնից. ծախ ձեռքին ներկերի տախտակ՝ վրան ներկեր, իսկ աջ ձեռքին վրձին). Ինչո՞ւ ես լալիս, Մանուշ, ի՞նչ եղաւ... (Տեսնելով տիկնիկի կտորտանքը): Էս ի՞նչ է... (Դառնալով Արամին): Էս դու արի՛ր:

ԱՐԱՄ Այո՛,

ԱՐԱՔՍ Ինչո՞ւ, գժւել ես, ինչ է...

ԱՐԱՄ Դու ես գժւել... Նա ինձ ասաւ վայրենի, ես էլ վայրենին ցոյց տալի...

ԱՐԱՔՍ Դու իսկական վայրենի ես, դու գիժ ես, դու խենթ ես:

ԱՐԱՄ. Լո՛ւր... Ես իշխան եմ, զինւորներս դուրսը սպասում են: Ով ինձ վայրենի ասի, ես վայրենի ցոյց կը ատամ... զինւորներին կը կանչեմ...

ԱՐԱՔՍ. Դու վայրենիների իշխան ես, ինքդ էլ վայրենի ես ..

ԱՐԱՄ. Հա՛, թող վայրենի լինեմ, դու ի՞նչ ես ուզում հիմա:

ԱՐԱՔՍ. Հիմա դու օրըդ կը տեսնես, երբ հայրիկը կը գայ... Կորիւր էստեղից...

ԱՐԱՄ. Շատ մի խօսիր... Ո՛ւմն ես վռնդում...

ԱՐԱՔՍ. Հէնց քեզ... քեզ նման վայրենուն պէտք է դուրս վազնդել... դու ի՞նչ գործ ունես էստեղ, դուրս կորիր... (Սպաննայից առաջանում ու ոտը խփում է գետնին)... Վայրենի...

ԱՐԱՄ. Ձայնդ կարիր... Գիտե՞ս՝ քեզ ի՞նչ կանեմ...

ԱՐԱՔՍ. Ի՞նչ կանես... ոչինչ չես կարող անել:

ԱՐԱՄ. Ձե՞մ կարող... (մօտենալով): Ու՛մ ես վազնդում...

ԱՐԱՔՍ. Հէնց քեզ...

ԱՐԱՄ. Այ քեզ վազնդել... (Պինդ ընկնում է երկու բազուկներից, ետ ետ տանելով սեղմում է պատին. մի ծեռքով պինդ ընկնելով նրա բազուկները, միսով վերցնում է վրձինը):

ՄԱՆՈՒՇ (ձշարով կանչում է). Վայրենի (ուզում է մօտենալ օգնել Արաքսին):

ԱՐԱՄ (գլուխը ծռելով ու քացի տալով՝ ընկնում է). Ձը մօտենա...

ՄԱՆՈՒՇ (վախեցած ետ-ետ է գնում). Օգնեցէք, օգնեցէք...

ԱՐԱՄ (վրձինով տախտակից ներկեր առնելով, սկսում է նախշել Արաքսի դէմքը— ծակատը, քիթը, թշերը, ծնոտը)... — Էս կանաչ, էս կապույտ, էս կարմիր, էս մանիշակագույն, էս էլ վարդագույն... (քաց թողնելով Արաքսին եւ վրձինը շարժւելով) Դէ գնա, էս էլ քեզ դուրս վազնդել... Հիմա ինքդ ես վայրենի... Ի՛հ, ի՛հ...

ԱՐԱՔՍ (ընդորո ուժով դիմադրում է Արա-

մին նրա ընկելու ժամանակ. պատին սեղմած՝ թրպրտում, քացում է՝ դուրս գալու համար, ծգնում է թոյլ չըտալու երեսը ներկել եւ կատաղած կանչում է) Գիժ, գժանոցի պտուղ... Օրդդ կը տեսնես... Խենթ... վայրենի, անպիտան... (Ազատելով) Զգւելի աղայ... էժան չի նստի քեզ... Էսպէս պիտի թողնեմ երեսս, մինչև հայրիկը, մայրիկը գան... Մանուշ, վերցրու տիկնիկիդ կտորտանքը, գնանք... (վերցնելով սեղանի վրայից ներկերի տախտակը եւ արագ դուրս գնալով). Կը տեսնես, թէ հայրիկը գլխիդ ի՞նչ է բերելու...

ՄԱՆՈՒՇ (լալով հաւաքում է փկնիկն՝ կտորտանքն ու շորերը արկղի մէջ եւ Արաքի ետեւից հեկեկալով դուրս է գնում՝ նոյնպէս աջ դռնով): Սպասի՛ր, հայրիկը գո՛յ...

ԱՐԱՄ (նրանց ետեւից լեզու ցոյց տալով). — Հայրիկը գո՛յ...

Տ Ե Ս Ս Ր Ա Ն IV

ԱՐԱՄ (մենակ)

Հէ, կերաւ... (սաստիկ ծիծաղում է, ձեռներն իրար (սփելով) Ի՞նչի նման էր երեսը... Էս երեսով էնքան պիտի սպասի, մինչև հայրիկը, մայրիկը գան... (սաստիկ ծիծաղում է) Տեսնես հիմա ի՞նչ է անում... (սաստիկ ծիծաղելուց կրճկւում, փորը ընկնում է) Հայրիկը, մայրիկը որ տեսնեն, այ թէ կը ծիծաղեն հա... (սաստիկ ծիծաղելով սենեակի մէջ գնում՝ գալիս է: Պատահմամբ

դուրս նայելով, կանգնում, մտնում է պատուհանին ու քարձր կանչում է). էհէյ, Խորէն... եկ էստեղ (քիչ սպասելով): Խոհանոցով արի, խոհանոցով... շուտ... (ետ գալով պատուհանից) Ես բոլորովին մոռացայ, որ այսօր կուի պէտք է դուրս գանք... Թուրս պէտք է գտնեմ (որունում է)...

ՏԵՍԱՐԱՆ V

ԱՐԱՄ և ԽՈՐԷՆ

ԽՈՐԷՆ (շտապ ներս է մտնում աջ դռնով ու գլխարկը վերցնում). Մենակ ես...

ԱՐԱՄ. Նրանք հաւաքւել են... շատ են...

ԽՈՐԷՆ. Այո:

ԱՐԱՄ. Սաֆարն էլ կայ... Սիմոնն էլ...

ԽՈՐԷՆ. Այո, նրանք սպասում են:

ԱՐԱՄ. Իսկ մեր ընկերները...

ԽՈՐԷՆ. Բոլորը եկել են, գնանք շուտ:

ԱՐԱՄ. Դու նոր պարսատիկ շինեցիր քեզ համար:

ԽՈՐԷՆ. Այո. (հանում է զրպանից մի պարսատիկ)—Պուլեմեօտի պէս արագ է գցում (զրպարկը դնելով գլխին): Նայիր (փորձում է):

ԱՐԱՄ. Իմս էլ արագ է գցում (հանում է զրպանից եւ երկուսն էլ արագ-արագ գցելու փորձ են կատարում):

ԽՈՐԷՆ (դադարելով). Դէ գնանք, շուտ արա:

ԱՐԱՄ. Գնանք... Ես ձեր իշխանը կը լինեմ, չէ...

ԽՈՐԷՆ. Հա:

ԱՐԱՄ. Դէ դու գնա, ես իսկոյն թուրս գտնեմ գամ:

ԽՈՐԷՆ. Դէ շուտ... (դուրս է գնում):

ԱՐԱՄ (Դէս ու դէն ընկնելով) Ո՞րտեղ եմ գցել... պահարանի ետևում կը լինի... (պահարանի ետևից հանում է փայտէ թուրը՝ պսպղան գօտիով, կապում է մէջքին, գլխարկը գցում է մի կողմ եւ ծածկում է զունատը թղթէ սաղաւարտ՝ ծայրին պուխկ)... Դէպի կռիւ... Ես իշխան եմ... (կանգնում է հպարտ, որպէս թէ կուռմն է, եւ սուրը հանելով) Յարձակում... (արագ-արագ վազվզում է սենեակի մէջ՝ սուրը քարձր ծօծելով, ապա կանգնում, սուրը դնում է պատեանը... հանելով պարսատիկը) Գրոհ... շտուրմ... (վազվզում է կոացած, թռչում է աթոռի, ապա սենեանի վրա, կրկնում է եւ որպէս թէ պարսատիկով քարկոծում է, զոռալով) Անձնատուր, անձնատուր... (կանգնելով) Յաղթութիւն... կեցցէ իշխանը... (ցած թռչելով սենեանից եւ քայլելով սենեակի մէջ) Մէկ երկու, մէկ երկու... Ես իշխան եմ... դէպի կռիւ... (քայլելով դէպի աջ դուռը եւ գլխարկը ծօծելով) Մահք բարեաւ, Մանուշ, Արաքս (դուրս է գնում):

(Բեմը մի երկու րոպէ մնում է դատարկ: Ապա դրսից լսում է զանգի ծայն: Շտապ-շտապ վազում են նախ Արաքսը՝ ներկած երեսով, ապա

Մանուշը՝ հեկեկալով եւ արկղիկը ձեռքին, դէպի դիմացի դուռը, դէպի նախասենեակը: Բեմի ետեւից լսում է Մանուշի եւ Արաքսի ձայները, — «Մայրիկ, ախ, ի՞նչու գնացիր: Մայրիկ, տես՝ տիկնիկս ինչ է եղել»: Մտնում է տիկ. Աննան, գլխարկով եւ հովանոցով, ու զարմացած շտապով գլխարկը, հովանոցն ու մի քանի կապոցներ դնում է աթոռի վրա):

ՏԵՍԱՐԱՆ VI

Տիկ. ԱՆՆԱ, ՄԱՆՈՒՇ, ԱՐԱՔՍ, ԱՐԱՄ

Տ. ԱՆՆԱ. (նստելով). Մի ասացէք տեսնեմ, ի՞նչ է պատահել, ի՞նչ...

ՄԱՆՈՒՇ. (հեկեկալով եւ ընդհատ, ընդհատ). Ես նստած էի այստեղ, տիկնիկիս հետ խաղում էի... Արամը եկաւ խից ձեռքիցս և էտպէս կոտորեց... (ըարկացած թափում է արկղից տիկնիկի կտորտանքը):

Տ. ԱՆՆԱ. Ինչո՞ւ, աղջիկ... երևի բարկացրած կը լինես...

ԱՐԱՔՍ. (յուզւած) Եթէ բարկացնեն, էտպէս պիտի անի...

Տ. ԱՆՆԱ. (ուշադիր նայելով Արաքսի դէմքին եւ զարմացած, ծիծաղը զսպելով)՝ Քո երեւան էդ ով է ներկել...

ԱՐԱՔՍ. (զսպելով ծիծաղը). Բա էլ ով պիտի անի... Ի հարկէ, Արամը:

Տ. ԱՆՆԱ. (վեր կենալով եւ վրդովւած)...

ԳԺԷԼ է այս տղան... Ախր ի՞նչ արիք նրան, որ այդպէս բան արաւ:

ԱՐԱՔՍ. Ոչինչ... Ուղղակի գԺԷԼ է, ուրիշ ոչինչ... (ըրսից կտրտող ասլակու ձայն է լսւում): Հիմա դուրսը չարութիւն է անում:

Տ. ԱՆՆԱ. Ապա կանչեցէք:

ԱՐԱՔՍ. (սլատուհանից). Արամ, Արամ, արի, մայրիկը կանչում է...

ԱՐԱՄ. (ըրսից). Ի՞նչ...

ԱՐԱՔՍ. Մայրիկը կանչում է, շուտով:

ԱՐԱՄ. Սուտ ես ասում:

ԱՆՆԱ. (սլատուհանից). Իսկոյն այստեղ բարձրացիր, անհանգիստ:

ԱՐԱՄ. Գալիս եմ, գալիս եմ:

ՄԱՆՈՒՇ. Մայրիկ, գալիս է, լաւ պատժի, մայրիկ ջան: (Բռնորը դառնում են դէպի դուռը):

ԱՐԱՄ. (տեսնելով մտնում հեկալով ու շտապ, թուրը մէջքն եւ թղթէ սաղաւարտը գլխին. յանկարծ տեսնելով մայրիկի ըարկացած դէմքը, մընում է կանգնած սենեակի մէջտեղում եւ կամացուկ առնում է սաղաւարտն ու պահում ձեռքին):

ՄԱՆՈՒՇ և ԱՐԱՔՍ. Սա էր, մայրիկ, ահա սա...

ԱՐԱՄ. (յանդուզն): Հա, ի՞նչ է, ի՞նչ...

ԱՐԱՔՍ. Ոչինչ, էտպէս... Աստծու անմեղ դառ... Կարծես ոչինչ չգիտէ...

ՄԱՆՈՒՇ. (ըարկացած ու համարձակ). Ինչո՞ւ տիկնիկս կոտրեցիր:

ԱՐԱՔՍ. Երեսս ի՞նչու ներկեցիր:

Տ. ԱՆՆԱ. Ասա մի տեսնենք, ախր ի՞նչ անենք քեզ հետ... ի՞նչ... մինչև ե՞րբ էտպէս շարունակւի...

ԱՐԱՄ (ըստիացած). Դէ ես ի՞նչ եմ արել... ինչո՞ւ են բարկացնում ինձ... ի՞նչու են ասում վայրենի...

Տ. ԱՆՆԱ. Ուժդ սրմնաց վրա ես փորձում, հա՞... Օրէցօր կատաղում ես... էլի էտ թուրը կապեցի՞ր, սաղաւարտը դրի՞ր... Ով գիտէ դուքսն էլ ի՞նչեր ես արել...

(Ամենքը լըջանում են).

Տ. ԱՆՆԱ. Այ տղայ, երևի էլի կուրի էիր գնացել, հա՞...

ՄԱՆՈՒՇ. Այո, մայրիկ, ասում էր, որ կուր է գնալու... Ես իշխան եմ՝ ասում էր...

Տ. ԱՆՆԱ. (Արամին). Դու նախ քո արածին նայիր, յետոյ ասա, թէ ինչ ես:

ԱՐԱՔՍ. (Արամին). Իսկի չի ամաչում...

Տ. ԱՆՆԱ. Դրսումը մենա՞կ էիր, թէ ընկերներդ էլի հաւաքել էիր...

ԱՐԱՔՍ. Ամբողջ թաղն այստեղ էր հաւաքել, մայրիկ:

ԱՐԱՄ. Հա, իսկ քեզ մօտ ընկերուհիներ չեն գալիս, ի՞նչ է...

Տ. ԱՆՆԱ. Դու տես, թէ դրսում ինչ արած կըլինեն... Ախար կուր են արել... Տեսնես էլի որի ապակին կտրած կը լինի, ո՞ր երեխային ծեծած կը լինի... (ըստիացած արագ-արագ շըր-

ջելով) Անտանելի ես, անտանելի... (լսում է գանգի ծայն):

ԱՇԽԷՆ (անցնում է դէպի դուռը):

ՄԱՆՈՒՇ. Մայրիկ, լաւ պատժիր սրան, որ էլ տիկնիկս չը կտարի...

Տ. ԱՆՆԱ. Ուղարկենք, թող գնա պանսիօնում, ուրիշի տանն ապրի:

ԱՐԱՔՍ. Սրան ո՞վ կը պահի:

ԱՐԱՄ. Ես մեր տանից ոչ մի տեղ չեմ գնայ:

ԱՐԱՔՍ. Քեզ շատ կը հարցնեն:

ԱՇԽԷՆ (ներս մտնելով). Մի պառաւ կին է, գանգատի է եկել...

Տ. ԱՆՆԱ (ծեռներն իրար խփելով) Ահա... սկսեց էլի... կտարել է, ծեծել է... (խիստ քաղկացած) Մի օր անպատճառ սա մի փորձանք կը բերի մեր գլխին... (Աշխէնին) Բեր այստեղ...

ԱՐԱՔՍ (վեր կենալով). Գնամ, օտար մարդ է գալիս:

Տ. ԱՆՆԱ. Գնա լացւիր... Երանի երբ պիտի խելօքանաս, Արամ, երբ... (Արաքսը դուրս է գնում. ներս է մտնում մի պառաւ՝ փաթած սեւ շալի մէջ, թելի տակին մի հաւ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն VII

ՆՐԱՆԸ ԵՒ ՊԱՌԱԽԸ

ՊԱՌԱԽ. Տիկին Աննա, քանի տարի է ձեր հարևանն եմ. գիտէք, թէ ինչպէս եմ ապրում... Մէջքս ծռած՝ լացք եմ անում, կարկատան եմ

անուամ... Էսօր լացքս բոլորը ցած են թափել հողերի մէջ, էս մի հաւն ունէի, ոտը կոտրել են, գլխին էլ են խփել, հիմա սատկում է... Բոլորի գլուխը ձեր Արամն է... մի լաւ ծեծէք՝ խելքի դայ: Քանի անգամ արգէն գանգատուել եմ... Ախր մեղք եմ...

ԱՐԱՄ. Քո հաւին Սափարը խփեց...

ՊԱՌԱԻ. Դու էիր, դու... Քարով տւիր...

ԱՆՆԱ. Մայրիկ, այս անգամ էլ ներեցէք մեզ. ես կը վճարեմ ձեր փեսայը: Ահա ձեզ փող հաւի և կեղտոտած լացքի համար: Ամաչացրեց մեզ աշխարհիս մէջ, ամաչացրեց: (Տալիս է փողը: Լուում է նորից զանգ. Աշխէնը դուրս է գնում):

ՊԱՌԱԻ. Ձէ, աիկին, իմ տղաս ուր լինէր, հողին կը հանէի, հողին (դուրս է գնում):

ԱՇԽԷՆ. (ներս գալով). Քաղաքի այգեպանն է, եկել է գանգատի:

Տ. ԱՆՆԱ. (Յուսահատ շարժումներ անելով). Թող ներս գայ (ման է գալիս):

(Պաուզա. բոլորը լուռ են եւ տխուր. Արամը անհանգստութեան նշաններ է ցոյց տալիս):

ՏԵՍԱՐԱՆ VIII

ՆՐԱՆԲ. եւ ԱՅԳԵՊԱՆ

(Ներս է մտնում՝ այգեպանը՝ հազին երկար շինել, զօտու մէջ խրած մի մեծ մկրատ, թնի տակ մի խորձ թարմ ճղներ ու տերեւներ):

ԱՅԳԵՊԱՆ. (Թափեւով ճղները յատակի վրա).

Խանում, քո տղան ինձ ողջ-ողջ մորթել է ու գում, ինչ է... Ես հիմա մեր վերակացւին ինչ պատասխան տամ... Էս բան է, որ տղադ անում է: Իր ընկերներով քաղաքի ողջ պարտէզը քարուքանդ արու... էլ ծառ չը թողեց, էլ մարդ չը թողեց...

ԱՐԱՄ. Ինձանից ինչ ես ուզում: Ուրիշները քանդեն, պոկեն, ինձ վրա դնեն...

ԱՅԳԵՊԱՆ. Դու չէիր կանչում. «Իշխան եմ, ինչ ուզեմ՝ կանեմ»:

Տ. ԱՆՆԱ. Արամ, դեռ համարձակում էլ ես արդարանալ:

ԱՅԳԵՊԱՆ. Ախար հիմա ես ինչ անեմ, ինչ... Վերակացուն որ տեսնի, չէ որ ինձ պաշտօնից կարձակի...

Տ. ԱՆՆԱ. (Արամին). Թէ իշխան ես, ապա սրան պաշտպանիր, էլի. (այգեպանին). Գնա, ախպէր, ես նրա հախիցը կը գամ, էլ ոտը քաղաքի պարտէզը չի դնի: Իսկ վերակացւի հետ ես ինքս կը խօսեմ, ներողութիւն կը խնդրեմ:

ԱՅԳԵՊԱՆ. Հա, խանում, ի սէր Աստծու: Թէ չէ մեղք եմ, դուրս կանեն, կնիկս, երեխաներս սոված կը մեռնեն: (Դուրս գնալով՝ Արամին): Ախ, թէ իմ որդին կը լինէիր...

ՏԵՍԱՐԱՆ IX.

ՆՐԱՆԲ., առանց այգեպանի, յետոյ մի ԿԻՆ երեխայով եւ ԱՐԱՄ.

Տ. ԱՆՆԱ. (զայրացած). Էլ փողոցում երեւալու

1007
328/4

Երես չունենք. Արամ, բոլորը քո պատճառով:
Անուններս կոտրեցիր, խայտառակեցիր...

ՄԱՆՈՒՇ. Մայրիկ, լաւ պատժիր Արամին,
լաւ պատժիր: Իմ տիկնիկն ի՞նչու կոտրեց (ան-
հանգիստ զանգեր):

Տ. ԱՆՆԱ. Տէր Աստուած, երանի թէ էլի բան
չը լինի (Աշխէնը վազում է դուռը քաց անելու).
Ասա, էլի ի՞նչ ես արել, մէկ անգամից ասա բո-
լորը, սպանիր մեզ, պրծիր: (Մանում է մի կին՝
հինգ տարեկան երեխային ձեռքից քաշ տալով:
Երեխան ճակատը ձեռքով ըռնած լաց է լինում):

ԿԻՆԸ (ճշարտ). Դու էլ կասես՝ մայր ես:
Էտ կապկորածին ի՞նչ ես մեզ վրա բաց թողել,
էտ մարդասպանին.

ԱՐԱՄ (կմկմալով). Ես... ես...

ԿԻՆԸ (կինը հետզհետէ ձայնը քարձրացնե-
լով). Մենք երեխայ չէ՞նք պահել, մենք տղայ
չէ՞նք մեծացրել... Էսպէս էլ պէժ ու կրակ...
(Մանուշը վախեցած մօր նտեն է թագ կենում):

Տ. ԱՆՆԱ. Ասա, վերջապէս, ի՞նչ է պատահել:

ԿԻՆԸ... Ի՞նչպէս թէ ինչ... երեխիս գլուխը
քարով ճղել է և հարցնում ես թէ ինչ է պա-
տահել: Մէկ բերէք՝ դրա ճակատն էլ ես ճղեմ
(պրծնում է Արամի վրա: Արամը թագնւում է
մօր նտեր):

Տ. ԱՆՆԱ. Ա կնիկ, մի քիչ հանգստացիր:
Բեր մի երեխիդ ճակատը տեսնես:

ԿԻՆԸ. Ի՞նչ տեսնես. Երեխայ ձե՞զ համար
եմ մեծացրել որ բանհոգի անէք:

Տ. ԱՆՆԱ. Արաքս, Արաքս, մի բամբակ բեր՝
երեխի ճակատը կապենք: Այս քո իշխանը մեզ
հայհոյանքի էլ արժանացրեց:

ԿԻՆԸ (երեխային). Մի լար, մի լար, բա-
լաս: Սպասիր, մէկ էլ փողոց է դուրս եկել,
հոգին կը հանեմ, հոգին (սալառնում է Արամին):

ԱՐԱՔՍ (ներս մտնելով, երեսը լացած, ե-
րեսսրջիչն ու քամքակը ձեռքին). Ահա մայրիկ,
բերի: (Տիկինն սկսում է երեխայի ճակատը կապել):

ԿԻՆԸ. Մի լար, անգինս, մի լար... Նա փիս
տղայ է, նա թոկից փախած է, նա անպիտան է,
նրան մայրիկը չի սիրում, մի լար, հոգիս, մի
լար...

ԱՐԱՔՍ (Արամին). Հը, լսում ես... Կերար
(Արամը գլուխը ցած է գցում). Մայրիկ, այնտեղ
խոհանոցում քեզ ցածրի կենացողի ծառան սպա-
սում է, Ասում է՝ Արամը հէնց քիչ առաջ քա-
րով կոտրել է լուսամտի ապակին ու սենեա-
կում գզրոցի վրա դրած հայելին...

Տ. ԱՆՆԱ. Այս էլ նոր դժբախտութիւն:

ՄԱՆՈՒՇ. Մայրիկ, Արամին լաւ պատժիր,
լաւ. ի՞նչու իմ տիկնիկը կոտրեց:

ԿԻՆԸ. (յանդուզն). Ուրիշներն ու ձեզ համար
հոգեառք էք պահում, հոգեառ... Աւելի լաւ է՝
էտպիսի որդի չը լինի, աւելի լաւ է՝ ջուրը ձգէք,
պրծնէք (երեխայի ձեռքից քաշելով՝ շտապով
դուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ X.

ՆՐԱՆԺ, առանց կնոջ.

Տ. ԱՆՆԱ. Ձէ, Աբամ, ես էլ տեսնում եմ՝ դու արժանի չես որ մեր որդին լինես...

ՄԱՆՈՒՇ. Մայրիկ, Աբամին լաւ պատժիր, լաւ...

Տ. ԱՆՆԱ. Հայրդ քեզ վաղուց է ուզում ուրիշի մօտ տալ: Գուցէ վերջապէս այնտեղ քաշես:

ԱՐԱՔՍ. Սրան ո՞վ կը պահի որ... Այնտեղ էլ ամենքի երեսը կը ներկի, ամեն ինչ կը կոտորար:

Տ. ԱՆՆԱ. (խիստ). ամիսներով մեր տան երեսը չես տեսնի: Մենք այգալիսի դաւակ չենք ուզում:

ԱՐԱՔՍ. Ես այգալիսի եղբայր չեմ ուզում...

ՄԱՆՈՒՇ. Ես էլ այգալիսի եղբայրն ի՞նչ կ'սեմ... Թող գնա, կորչի մեզանից...

Տ. ԱՆՆԱ. Լսում ես: Քեզ ոչոք չի ուզում... Այսօրեքի կ'ստան հայրիկին, որ քեզ մի ուրիշ ընտանիքի մէջ տայ: Տեսնենք ի՞նչպէս ես այնտեղ քո իշխանութիւնդ բանեցնում: (Զանգի ծայն):

ԱՐԱՔՍ. Անպատճառ հայրիկը կը լինի... Նա է այսպէս դանդ տալիս...

ՄԱՆՈՒՇ. Սպասիր գնամ ասեմ... Թող դուրս անի քեզ մեր մօտից, դուրս անի: (Ուզում է զնայ):

ԱՐԱՔՍ (շտապով առաջը կտրելով, աղաչանքով). Մի գնա... Հասես...

Տ. ԱՆՆԱ. Ի՞նչպէս թէ չասի...

ԱՐԱՔՍ (լաց լինելով). Մայրիկ ջան, այս վերջին անգամ թող լինի, էլ չեմ անի (կրկին զանգ):

Տ. ԱՆՆԱ. Աշխէնն ի՞նչու է ուշանում: (Արամին) Շատ անգամ ես խոստացել եմ նորից արել:

ԱՐԱՔՍ (շտապով). Ձեմ անի, մայրիկ ջան, չեմ անի: Հայրիկին բան չասէք: Այ տեսէք, այս սուրը (կոտորում է), այս սաղաւարտը (զզզում է). այս պարսառիկը (պատռում է):

ՄԱՆՈՒՇ. Ի՞նչ ես անում, ի՞նչ ես անում: Մայրիկ, տես, սիրուն սուրը կոտրեց... (Կրկին զանգ. Աշխէնը՝ «գալիս եմ, գալիս եմ» կանչելով աջ դռնից վազում է դէպի նախասենեակը):

ԱՐԱՔՍ (լաց լինելով). Մայրիկ, մի ասա, էլ չեմ անի:

ԱՐԱՔՍ. Լաւ է, մայրիկ, էլ չի անի, մի ասա:

ԱՐԱՔՍ. Ձեմ անիլ, խօսք եմ տալիս, չեմ անի...

Տ. ԱՆՆԱ. Այս վերջին անգամը լինի, տես վերջին անգամ:

ԱՐԱՔՍ (փաթաթելով մօրը). Մայրիկ:

ՄԱՆՈՒՇ. Բաս ես էլ հայրիկին բան չասեմ (կանգնած է մոլորաւթ. ռացում է նախասենեակի դուռը, նրեւում է՝ ինչպէս Աշխէնը օգնում է պարոնին վերարկուն հանել, վարազոյրը կամաց իջնում է):

«Հ Ա Ս Կ Ե Ր Ի» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Քառն օր գետնի տակ 20 Կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . . 20 Կ.
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամլ որդներ . . . 25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . 8 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ գինւորներ, պիէս . . . 20 »
6. Ռ. Պատկանեան, Չախու . . . 10 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . 20 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ. Քեռի Մկօ . . . 12 »
9. Կարլ Էվալդ. Երկերն ու զխառաղը . . . 12 »
10. Կապուտան. Ֆիօրէ փերին, Ասեղ . . . 20 »
11. Իւանովիչ. Աւօհնց Ստեփանը . . . 12 »
12. Կ. Լուկաշևիչ. Ծաղիկները մէջ . . . 20 »
13. Աթ. Խնկոյեան. Աղւէսն ու արջը . . . 15 »
14. Նիկ. Սարգսեան. Կենդանիները գոյները . . . 12 »
15. Բրետ Հարտ. Մլիս . . . 12 »
16. Է. Սիւտոն-Տօմպսօն Կախականչիկը . . . 25 »
17. Գ. Շլաք. Արագոնաւորդները . . . 12 »
18. Աթ. Խնկոյեան. Պապն ու շաղգամը . . . 12 »
19. Կար. Միրիանեան. Մայրը . . . 20 »
20. Յովհ. Թուման. Քէֆ անողին քէֆ չի պակսիլ . . . 20 »
21. Պուշկին. Քնած դժխուհին . . . 20 »
22. Ն. Սարգսեան. Թէ ինչու համար է ծաղիկը . . . 20 »
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածուած սերմերը . . . 10 »
24. Կարլ Էվալդ. Տասներկու քոյր . . . 10 »
25. Ֆէրրօ. Տօնի համար . . . 10 »
26. Աթ. Խնկոյեան. Փեսացու մուկը . . . 10 »
27. Աթ. Խնկոյեան. Աղւէսն ու Կոռնիկը . . . 10 »
28. Մամին-Սիբիրեակ. Ծեր ճնշողը, ձիճու,
Պառաւ Մոռանի խոստովանքը . . . 12 »
29. Վարդան Վարդանեան. Մաարդն ու Նամարդը . . . 5 »
30. Աթ. Խնկոյեան. Ծիտն ու Որբերը . . . 20 »
31. Էրնստ Սէտօն-Տօմպսօն. Կաղիկ քոթոթը . . . 20 »
32. Կ. Մ. Ստանիսկովիչ. Դայեակը . . . 20 »

ՀԱՄԱՆԻ ԱՐՄԱԴՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

1. Ստ. Լիսիցեան. Պանդուրիկ
Ստ. Լիսիցեան. Աղաարութիւն
2. Սէյրի. Նոր վարժուհին
3. Սէյրի. Ես իշխան եմ
4. Ստ. Լիսիցեան. Գաղանիք
5. Ժորժիկ Մանուկեան. Փնթի
Գ. Շահ-Պարոն. Գող—սիրտը դող
6. Տիկ. Մարգարիտ. Դասարանում
7. Յ. Բեօսեան եւ Ստ. Լիսիցեան. Քեռին
8. Գլազունով. Տիկին Սիրան, փոխ. Կ. Միրիանեան

Իւրաքանչիւր գրքուկը 5 կոպէկ



ՀՀ Ազգային գրադարան



NL0402748

12677